

← ԲԱՐՁՐ ՊԱԳԵՆՔ ...

Ալիք օրաթերթի պատասխանը

Համայնքի ու հասարակայնության մերօրեայ պատակտիչները կամ՝ «Իրանահայեր»-ի «Լոյս»-ն ու սուերը...

Եվ այնուհետ այդ առնչությամբ անճիշտ տեղեկատվությունը, որտեղ ծնողների պահանջը՝ դպրոցի չփակելու փոխարեն, ձեւացվեց մի տարօրինակ պահանջի, թե «ինչու դպրոցի փակելու մասին մեզ ավելի շուտ չեք ասել» կամ թե՝ «պարզեք մեր վիճակը, որ իմանանք թե որտեղ պիտի արձանագրենք մեր երեխաներին», որն իրականում ապատեղեկացնող եւ սպակողմնորոշող մի տեսարան էր եւ ուրիշ ոչինչ:

«Ալիք» օրաթերթը ոչ միայն կրկնում է Թեմական խորհրդի կողմից «Ռոստոմ» դպրոցի փակման մասին հրապարակված անհիմն հայտարարությունը, այլ նրանից էլ առաջ անցնելով 20-25 հոգուն ներկայացնում է որպես այդ դպրոցի ողջ աշակերտության ծնողների, որը համագոր է բացարձակ ստի: Ու դեռ ավելացնում, որ հուլիսի 6-ին Թեմական խորհրդի, Պատգամավորական ժողովի դիվանի եւ Կրթական խորհրդի հետ համատեղ միստի ընթացքում «ծնողները (այսինքն այդ 20-25 հոգին) տեցին իրենց լիարժեք համաձայնությունը, որպեսզի Թեմական խորհուրդն անցնի գործնական փուլին եւ սկսի գործադրել «Ռոստոմ» աղջ. դպրոցը «Արաքս» դպրոցին միաւորելու գործընթացը», այսինքն փակումը, որն ընդհանրապես չի համապատասխանում իրականությանը, որովհետև հիշյալ միստում ոչ քվեարկություն եղավ, ո՛չ էլ հավաքական հաստատում, նույնիսկ այդ սակավաթիվ ներկաների կողմից:

Իհարկե մենք լավապես գիտակցում ենք, որ «Ալիք»-ը անկախ թերթ չէ, այլ կուսակցական պաշտոնաթերթ է, ինքնաբերաբար, արտացոլում է պատկան կուսակցության տեսակետները և ոչ թե հասարակական պահանջը, սակայն դա չի նշանակում, թե որեւէ կուսակցության պաշտոնաթերթ իրավունք ունի իր նախասիրություններից ելած աղավաղել հարցերը, այլափոխել իրականությունները եւ սուտ լրատվություն կատարելով մոլորեցնել հասարակությունը:

Այստեղ խնդիրը լոկ «Ալիք» օրաթերթի սխալ կեցվածքը չէ, այլ այն անառողջ մոտեցումը, որով նա փորձում է ազգային իշխանությունների սխալը քողարկել, որը պակաս բան չէ քան ինքը սխալը, և նույնիսկ երբեմն ավելի քան ինքի՝ որի համար նախեստաջ պատասխանատու է Դաշնակցություն կուսակցությունը եւ ապա թերթի խմբագրական կազմը:

Կասկածից վեր է, որ համայնքի նյութական, հոգեւոր եւ բարոյական շահի զոհեւրը հանուն հատվածական շահի, կարող է ունենալ անվերադարձ կորուստներ: Ուստի «Ալիք» օրաթերթին կոչ ենք անում հեռու մնալ այնպիսի քայլերից, որով կխաթարվի համայնք-մամուլ փոխհարաբերությունը:

Թեհրան, 15 հուլիսի 2010թ.

«Իրանահայեր» լրատու ցանց
«Արաքս» շաբաթաթերթ
«Լույս» ամսագիր

Հայկական էլեկտրոնային եւ տպագիր մամուլից խնդրում ենք, արձագանքելով այս կոչը, Բարձր պահել հայ մամուլի վարկը եւ դեմ կանգնել անճիշտ լրատվությունը սովորույթի վերածելու ավերիչ գործունեության:

Ազգային նկարագիրն ու մշակոյթը աներկբայօրէն ամէն մի ազգի սեփականութիւնն են ու բխում են նրա ազգային ներաշխարհից, որն ունի իրեն իւրայատուկ երանգները եւ որը կարող է ընդհանուր եզրերի մէջ միացնել ազգերին կամ ընդհակառակը՝ տարանջատել իր բազմատարրութեամբ: Բայց, արի ու տես, որ նոյնը չեն աշխարհում տիրող տնտեսական զարգացումներից ու անկումներից բխող վերիվայրումները, որոնք նոյն ժամային ծիրում տարածում են ներթափանցում են աշխարհում գոյութիւն ունեցող երկրների

առօրեայում: Եթէ ոչ շատ վաղ անցեալում, ընդամենը տասնամեակներ առաջ, կենցաղային առօրեան ու կեանքը փոքրիկ սանդղակային ցուցանիշներով զարթօնք էր ապրում, ապա այսօր հենց նոյն սանդղակային չափանիշներով ոչ այնքան բարեկեցիկ եւ խնդիրներով ու դժարութիւններով յագեցած իրողութիւն է ապրում, որը անմիջականօրէն շաղկապւած է աշխարհում տիրող տնտեսական իրավիճակին ու սահմաններ չի ճանաչում: Տնտեսական իրավիճակ, որն այսօր պարտադրող հրամայական է դարձել՝ վերանայելու եւ վերադասաւորելու մարդու կենցաղը, աշխատանքն ու առօրեան:

Վերադառնանք բուն հարցին, որի ազդեցութիւնը կրում ենք նաեւ մենք՝ որպէս այս երկրում ապրող փոքրամասնութիւն՝ զերծ չմնալով տնտեսական ճգնաժամի հետեւանքներից, որն այսօր արդէն իսկ ուղղակի որպէս ժամանակի մարտահրաւէր՝ մեզանից համապատասխան առնելիք քայլեր է պահանջում: Ու ելնելով այս հրամայականից՝ իրանահայ համայնքում արդէն իսկ սկսել են վերադասաւորման եւ վերանայման գործընթացներ, օպտիմալացումը առաւել քան հրատապ է դառնում մեզ համար, քանզի առկայ է արտագաղթի երեւոյթը, որը երկրում արդէն իսկ փոքրամասնութիւն անականի տակ թաքանակի նւազմամբ աւելի է շեշտուում: Աւելիով սեղմելով այս հարցի օղակը՝ անցնենք համայնքում այս բոլոր երեւոյթների ու գործընթացների լուսաբանումներին, որին որպէս մեր համայնքի միակ խօսափողը՝ իր տարիների կոչմանը հաւատարիմ՝ որքան հնարաւոր է վաղվաղակի, իմա՝ իսկոյն, «Ալիք» օրաթերթը արձագանգել է՝ հիմնւելով, մէկ անգամ եւս շեշտում ենք՝ հիմնւելով ՓՄԱՍՏԵՐԻ ԵՒ ՓՄԱՍՍՍՅԻ իրողութիւնների վրայ: Այս շեշտադրումը նրանց համար է, ովքեր առանց դոյզն իսկ արժանապատուութիւն ունենալու՝ մեղադրում են մեզ՝ «Ալիք» օրաթերթին, «իբր որդեգրած գործելաճճի հետեւանքով՝ իբր հայ մամուլի ազնուութիւնը հարցականի տակ դնելու» մէջ: Եւ սա արտացոլում է մի կայքէջային լրատամիջոցից՝ «Իրանահայեր» յորջորջումով, որի խօսքին էլ որպէս համախոհ՝ իրենց կնիքն են դնում լրատամիջոցի յասակնութիւն ունեցող «Արաքս»-ն ու «Լոյս»-ը:

Վերջին ամիսների ընթացքում յատկապէս նման մեղադրանքներ վերը նշւած վայ լրատամիջոցների կողմից

բազմիցս են հասցեագրել մեզ, բայց «Ալիք»-ը, որ միշտ խոհեմ ու լուռ է տարել նման հասցեագրումները, իրեն վայել չհամարելով պատասխանել այսօրինակ ճղճիմ ու ստայօդ ցեխարձակումներին, այդուհանդերձ՝ այսօր կարիքը զգաց բարձրաձայնելու՝ չցանկանալով համայնքի հասարակութեան փոքրաթիվ այն զանգածին, որը հետեւում է կայքին ու նաեւ հայաստանեան հասարակութեանը, որին ուղղած է կոչը, նոյնիսկ վայրկեան իսկ շեղելու իր համոզումներում: «Ալիք», որը մշտապես ներել է ու հանդուրժել է հենց վերը նշածների ոտնձգություններին՝ գերադասելով համայնքային միասնականութեան ու միատարրութեան պահպանումը, որի ալիքին նպատակայնօրէն հակառակ են թիավարում «Բարձր պահենք մամուլի վարկը» կոչ յղողները՝ իրենց թերեւաբարոյ եւ ոչ-խելամիտ կեցւածքով:

Չէինք գրի այս բոլորը, եթէ որպէս համայնքի միակ օրաթերթը լինելու գաղափարը փայփայող զինուորներ՝ չունենայինք այն նախանձախնդրությունը, որ անաչառօրէն եւ առարկայօրէն փաստացի տւեալների հիման վրայ լուսաբանէինք համայնքային ողջ անցուդարձերը, քանզի մեծ ժողովրդականություն վայելող մեր թերթին սպասում են հազարաւոր ընթերցողներ, որոնց մօտ իւրաքանչիւր բառի եւ տառի համար պատասխանատուութիւն ենք զգում՝ հակառակ «Իրանահայեր» «լրատւական» կայքէջի, որի համախոհ ընթերցողների «բանակը» չի անցնում գոնէ տասնեակը եւ ինչպէս ժողովրդական խօսքն է ասում՝ խեղդուող փրփուրներից է կախում, սրանք էլ ընթերցող հասարակայնութիւն են փնտրում հայաստանեան հասարակութիւնում իրենց շինծու լրատուութեամբ, դեռ մի հատ էլ «կոչ» ձեւակերպում:

Մինչ կանցնենք նրանց կայքէջային լուսաբանումների իրողութիւնների փաստացի ճշգրտմանը, որոնք զուտ խեղաթիւրումներ են իրենցից ներկայացնում, մենք մեր զարմանքն ենք արտայայտում, որ նրանք, ովքեր ի դէմս այս լրատւամիջոցների՝ իրենց «մամուլի ազնիւ առաքեալներ» են համարում, տողատակերում պատգամների ընդմիջում իրենց ներկայացնելով որպէս զոհեր՝ ապա ինչու են այս «ազգասէր ու ճշմարտախօս զոհերը» ընտրել հեշտ ուղին՝ հենց համայնքային մակարդակում, չասենք ազգային, պառակտումային նպատակաւարտութեամբ «լուսաբանություններ» անելով: Եթէ այդքան ազգասէր մարդիկ էք եւ օր ու գիշեր չէք քնում համայնքային «սխալ գործելաճից եւ մամուլի ոչ-ճիշտ լուսաբանումներից» մտահոգ, ճիշտ կը լինէր հիմնելով թուրքալեզու հայամէտ կայքէջ՝ կայքէջային այդ ողջ կարողականութեան ու ներուժի սլաքն ուղղելիք համազգային խնդիրների քարոզչութեանը, զորօրինակ՝ Հայոց Յեղասպանութեան ճշմարտացի իրողութեան քարոզչութիւնը, Արցախեան հիմնախնդիրը եւ այլն, ինչպէս ամիսներ առաջ արեց Ադրբեջանը՝ հիմնելով «Armenian.az» հայալեզու կայքէջը, որ ամբողջութեամբ հակաքարոզչութիւն է՝ ընդդէմ մեզ: Բհարկէ, ի՞նչ ենք սպասում նման մարդկանցից. «լրագրողներ», որոնք նոյնիսկ իրենց քթի տակ, համայնքում, ազգային ու համազգային նշանակութիւն ունեցող, ինչպիսիք՝ ապրիլի 24-ի համահաւաքն է, Թեհրան-Երեւան յուլիսի 15-ի ալիավթարին կապող անցուդարձերը եւ նման շատ այլ բաներ, ինքնուրոյն չեն լուսաբանում այլ հենց հեշտ ու

հանգիստ գործելաճ մշակելով՝ ուղղակի վերցնում են թերթիս լրատուութիւնը եւ զետեղում իրենց կայքէջում, եւ այստեղ ինչպէ՛ս է, որ վստահում են լուրի հաւաստիացմանը եւ յաճախ նոյնիսկ տառացիօրէն մեր աղբիւրից վերցւած նիւթի ճակատին «Ալիք» օրաթերթ աղբիւրը առանց խղճմտանքի՝ փոխարինում են «Իրանահայեր» լրատու ցանցով. ահա թէ ո՞ր է «Բարձր պահենք մամուլի վարկը» ջատագովների «ճշմարտացիութեան գաղափարախօսութիւնը»: Այս ամէնը գալիս է ապացուցելու եւ առաւել շեշտաւորելու այն ցաւալի իրողութիւնը, որ համայնքային նոյնիսկ ճակատագրական նշանակութիւն ունեցող հարցերը փոխանակ միակամ ու մի բռունցք դարձած լուծելու՝ տարանջատում, դառնում են անձնական շահերի եւ եսակենտրոն նկրտումների զոհ՝ խախտելով հասարակութեան մտքի եւ միասնականութեան ամենակարեւոր խարիսխը, ստեղծելով անվստահութեան մթնոլորտ եւ ոչ-լիարժէքութեան զգացում, որին ուրիշ որեւէ որակաւորում եւ պիտակաւորում չես կարող տալ բացի վարակ, որը անզգայաբար իրեն անհրաժեշտ միջավայրն է ապահովում՝ ոչնչացնելով համայնքային առողջ օրգանիզմը:

Մեր եզրափակիչ խօսքում միայն կարող ենք ասել, որ կարծում ենք՝ վերոգրեալներին բազմիցս է ապացուցել, որ «Ալիք»-ն իր գոյութեամբ, իր գրչի շիտակութեամբ ու մտքի անկեղծութեամբ միշտ եղել է պատմէշի վրայ ու բազում նման փորձութիւնների է ենթարկւել արդէն շուրջ 80-ամեայ իր երթի ընթացքում, բայց երբեւէ չի ընկրկել իր դէմ սուր ճօճողների մեքենայութիւնների դիմաց, այլ ընդհակառակը՝ այդ փորձութիւններից նա դասեր քաղելով՝ դարձել է աւելի զօրեղ ու բանական մտքով առաջնորդող: Վկայութիւնը՝ նրա արդէն 80-ամեայ յարատեւութիւնը: Այս հերթական փորձութիւնն էլ, որ, ինչպէս ժողովրդական խօսքն է ասում, այս խմորը շատ ջուր կը տանի, այսինքն՝ կայքէջային այս մեխիզները, որոնք ուղղած են մեզ, վստահ ենք, կանցնեն պատմութեան գիրկը, բայց այս ոչ-կառուցողական ու համայնքի պառակտմանն ուղղւած գործընթացի «գլխաւոր հերոսները» կը մնան որպէս ինքնակոչներ, որոնց հետագայում արհամարհւած լինելը չի որակի եւ որպէս հարցադրում՝ չի հնչի՝ «Եթէ դաշնակցական չես, հայ չե՛ս»: Եւ, իմիջիայլոց, Դաշնակցութեան օրգան-պաշտօնաթերթը լինելով՝ երբեւէ չենք ջանացել շահագործել օրգանի գաղափարը, քանզի մշտապէս գիտակցել ենք, որ չենք կարող միայն կուսակցութեան խօսափողը լինել, որովհետեւ կուսակցութեան գաղափարախօսութիւնը ինքնին ազգային է եւ մենք որպէս օրաթերթ՝ գոյատեւում ենք փոքրամասնութիւն կոչուող համայնքում, որն իր ուսերին է պարտաւոր միաժամանակ տանելու համայնքի տարաբնոյթ մտասէւեռումներով յազեցած առօրեան՝ սկսած ազգապահպանութիւնից մինչեւ ամենաչնչին իրողութիւնը: Այնպէս որ՝ զուր են ձեր նկրտումները եւ մէկ անգամ եւս խորհուրդ կը տայինք ձեզ զբաղւել համայնքային, ազգային ու մանաւանդ համազգային հիմնահարցերի անաչառ ու ազնիւ լուսաբանմամբ եւ գոնէ այդ դէպքում՝ պարզերես կը լինէք համայնքի իրականութեան մէջ:

ԱԼԻՔ ՕՐԱԹԵՐԹ
19 ՅՈՒՆԻՄԻ, 2010 Թ.

**Մեր զգաստության հրավերը եւ «Ալիք»-ի
խուլ ականջները...
կամ «ով որ դաշնակցական չէ, հայ չէ»**

Սույն թվի հուլիսի 15-ին, իրանահայ մամուլի երեք ներկայացուցիչներն՝ «Արաքս» շաբաթաթերթ, «Լույս» ամսագիր և «Իրանահայեր» լրատվական ցանցը, Իրանահայ համայնքի հայկական դպրոցների եւ ազգային հաստատությունների իրարահաջորդ փակման վերաբերյալ ՀՀ-ի պաշտոնաթերթ «Ալիք» օրաթերթի խեղաթյուրված լրատվության կապակցությամբ համատեղ մի կոչով մասնավորաբար նշել էինք, որ «լավապես գիտակցում ենք, որ «Ալիք»-ը անկախ թերթ չէ, այլ կուսակցական պաշտոնաթերթ եւ, ինքնաբերաբար, արտացոլում է պատկան կուսակցության տեսակետները եւ ոչ թե հասարակական պահանջը, սակայն դա չի նշանակում, թե որեւէ կուսակցության պաշտոնաթերթ իրավունք ունի իր նախասիրություններից ելած աղավաղել հարցերը, այլափոխել իրականությունները եւ սուտ լրատվություն կատարելով մոլորեցնել հասարակությունը»:

Հայտարարությամբ նույնպես, շեշտադրված, նշել էինք, որ ««Ալիք»-ը ոչ միայն կրկնում է թեմական խորհրդի կողմից «Ռոստոմ» դպրոցի փակման մասին հրապարակված անհիմն հայտարարությունը, այլ նրանից էլ առաջ անցնելով, (եւ անտեսելով 300 բողոքարկող ծնողների եւ դպրոցի հարակից «Բահար» շրջանի քաղաքացիների ստորագրահավաքը), 20-25 հոգուն ներկայացնում է որպես այդ դպրոցի ողջ աշակերտության ծնողների, որ «տուեցին իրենց լիարժեք համաձայնությունը, որպէսզի թեմական խորհուրդն սկսի գործադրել «Ռոստոմ» աղջ. դպրոցը «Արաքս» դպրոցին միաւորելու գործընթացը», այսինքն փակումը, որն ընդհանրապես չի համապատասխանում իրականությանը, որովհետեւ հիշյալ միստոմ ոչ քվեարկություն եղավ, ոչ էլ հավաքական հաստատում, նույնիսկ այդ սակավաթիվ ներկաների կողմից»:

Վերջապես, համատեղ հայտարարության ավարտին ահագանգել էինք, որ ««Ալիք» օրաթերթի որդեգրած գործելաճի հետեւանքով հարցականի տակ է դրվել հայ մամուլի ազնվությունը, ինչը կարող է բացասական հետեւանքներ ունենալ համայնքի համերաշխության եւ կենսունակության վրա»:

Եվ ահա, հուլիսի 19-ին, «Ալիք» օրաթերթը փոխարեն սթափվելու եւ անսալու մեր կոչին, կամ ապացուցելու, որ «ինքը չի ստել», հրապարակել է «Համայնքի ու հասարակայնության մերօրեայ պառակտիչները» վերնագրով մի գրություն, որում այս մտահոգիչ եւ կենսական հարցի վերաբերյալ մեր եւ համայնքում առկա հարցադրումներին պատասխանելու փոխարեն, պատասխանել է հետեւյալ ոճով եւ կերպով:

*«Մերօրեայ պառակտիչները... առանց դոյզն իսկ արժանապատուութիւն ունենալու՝ մեղադրում են մեզ՝ «Ալիք» օրաթերթին, ... սա արտացոլում է մի կայքէջային լրատվամիջոցից՝ «Իրանահայեր» յորջորջումով, որի խօսքին էլ որպէս համախոհ՝ իրենց կնիքն են դնում լրատվամիջոցի յաւակնութիւն ունեցող «Արաքս»-ն ու «Լոյս»-ը:
«... նշւած վայ լրատվամիջոցների կողմից բազմիցս են հասցեագրւել մեզ,*

*... որի համախոհ ընթերցողների «բանակը» չի անցնում գոնէ տասնեակը եւ ինչպէս ժողովրդական խօսքն է ասում՝ խեղդուող փրփուրներից է կախում, սրանք էլ ընթերցող հասարակայնութիւն են փնտրում հայաստանեան հասարակութիւնում իրենց շինծու լրատուութեամբ, դեռ մի հատ էլ «կոչ» ձեւակերպում:
Եթէ այդքան ազգասէր մարդիկ էք եւ օր ու գիշեր չէք քնում համայնքային «սխալ գործելաճից եւ մամուլի ոչ-ճիշտ լուսաբանումներից» մտահոգ, ճիշտ կը լինէր հիմնելով թուրքալեզու հայամէտ կայքէջ...
*ի՞նչ ենք սպասում մնան մարդկանցից...
«լրագրողներ», ... անձնական շահերի եւ եսակենտրոն մկրտումներ ... որոնք նոյնիսկ իրենց քթի տակ...»:**

Մեզ՝ Իրանահայ մամուլի երեք ներկայացուցիչներին, այս գրգռիչ եւ անպատասխանատու վերաբերումին ի պատասխան, միայն մնում է դիմել հրապարակայնության:

Մենք զնահատական չենք տվել եւ չենք տալու թե ո՞վ է «արժանապատվության» տեր, ո՞վ է «վայ լրատվամիջոց», ո՞վ է «պառակտիչ», ո՞վ է «լրատվամիջոցի հավակնություն ունեցողը, որի ընթերցողների բանակը չի անցնում տասը», թե ո՞վ է «փրփուրներից կախվող, խեղդվողը», «ընթերցող փնտրողը»: Այլոց «ազգասիրության եւ մարդկային արժեքների» մասին գնահատականներ տալու փոխարեն, իրենց 80-ամյա, կամ 180-ամյա «փորձառության» տեր համարողները թող լինեն համեստ եւ չստեն, չգրպարտեն իրենց սուտն ու սխալը բացահայտողին եւ կամայական գործունեության դիմելով չոտնահարեն համայնքի ցանկությունները:

Թերեւս «Ալիք»-ը մոռացել է կամ չի գիտակցում, որ այլ թվականներում է ապրում, որ փոխվել են ժամանակներն ու սերունդները, թե տասնամյակներ է, որ ավարտվել է պաղ պատերազմը, որ չկան այլես իր ծայրահեղություններն ու այլամերժությունները քաջալերողներ եւ հովանավորողներ, եւ այս իրենց, մեզմ ասած անհամեստ գրականության համար, կարելի է իրենց դատի տալ, այլապես դեռեւս չէր գրի վերոնշյալները եւ դեռեւս, ինքն իրեն ծիծաղելի վիճակի մատնելով, չէր գրի հետեւյալը...

*«Ալիք»-ին՝ «մեծ ժողովրդականութիւն վայելող մեր թերթին, սպասում են հազարաւոր ընթերցողներ... համայնքի միակ խօսափողը...
«Ալիք», որը մշտապէս ներել է ու հանդուրժել է հենց վերը նշւածների ոտնձգութիւններին... «Ալիք»-ը, որ միշտ խոհեմ ու լուռ է... իրեն վայել չհամարելով պատասխանել այսօրինակ ճղճիմ ու ստայօղ ցեխարծակումներին...
«Ալիք»-ն իր գոյութեամբ, իր 80-ամեայ երթի ընթացքում, երբեւէ չի ընկրկել իր դէմ սուր ճօճողների մեքենայութիւնների դիմաց, այլ դարձել է աւելի գօրեղ:
...այս խմորը շատ ջուր կը տանի, այսինքն՝ կայքէջային այս մեխիջները, որոնք ուղղւած են մեզ, վստահ ենք, կանցնեն պատմութեան գիրկը ու համայնքի պառակտմանն ուղղւած գործընթացի «գլխաւոր հերոսները» կը մնան որպէս ինքնակոչներ, որոնց հետագայում արհամարհւած լինելը չի որակի եւ որպէս հարցադրում՝ չի հնչի՝ «եթէ դաշնակցական չես, հայ չէ՞ս»:*

Եզրափակենք մեր խոսքը.

Մենք չենք ասել թե ինչ պիտի անի ԴՅԴ-ը կամ «Ալիք» օրաթերթը, դա իրենց գիտելիքն է, ցանկացած կուսակցություն եւ օրգան արժեւորվելու եւ արժեւորվում է իր կեցվածքով եւ գործունեությամբ: Համատեղ կոչ-ով, ստորագրյալներս հայտարարեցինք, որ «Ալիք»-ը եւ ցանկացած լրատվամիջոց ինչ չպետք է անի եւ իրավունք չունի անելու:

Հրապարակեցինք հայտարարություն, որովհետեւ այստեղ խնդիրը լոկ «Ալիք» օրաթերթի սխալ կեցվածքը չէր, այլ այն անառողջ մոտեցումը, որով նա փորձում է ազգային իշխանությունների սխալը քողարկել, որը պակաս բան չէ քան ինքը սխալը, և նույնիսկ երբեմն ավելի քանդիչ՝ որի համար նախեստաց պատասխանատու է Դաշնակցություն կուսակցությունը եւ ապա թերթի խմբագրական կազմը: Ուստի «Ալիք» օրաթերթին կրկին կոչ ենք անում հեռու մնալ այնպիսի քայլերից, որով կխաթարվի համայնք-մամուլ փոխհարաբերությունը:

Թեհրան, 24 հուլիսի 2010թ.

«Իրանահայեր» լրատու ցանց
«Արաքս» շաբաթաթերթ
«Լույս» ամսագիր

Իրանահայ համայնք

Վախճանվել է իրանահայ անվանի գիտնական պրոֆեսոր Կարո Լուկասը



2010 թ. հուլիս 8-ին, 59 տարեկան հասակում քաղցկեղից վախճանվել է ուշիմ համակարգեր (Intelligent Systems) ասպարեզի անվանի գիտնական պրոֆեսոր Կարո Լուկասը:

Կարո Լուկասը (Ղուկասյանը) ծնվել է 1951 թվականին Իրանի Իսֆահան քաղաքի Նոր Ջուղա հայկական թաղամասում եւ ավարտել է Թեհրանի ազգային Քուշեշ Մարիամյան դպրոցը, ապա 1973 թվականին Թեհրանի Համալսարանի ճարտարագիտական (տեխնիկական) ֆակուլտետից ստացել բարձրագույն կրթություն (MSc) Էլեկտրոնիկայի եւ համակարգչային տեխնոլոգիայի բնագավառում: 1976 թվականին ստացել է դոկտորական (PhD) կոչում աշխարհահռչակ Կալիֆորնիայի Բերքլի համալսարանից:

1993-97թվականներին եղել է Հիմնարար Գիտությունների Հետազոտական Կենտրոնի (IPM) տնօրենը, որը համարվում է Իրանի առաջնատար գիտական կազմակերպություններից: 1986-88 թվականներին ղեկավարել է Թեհրանի Համալսարանի Էլեկտրոնիկայի ճարտարագիտության ֆակուլտետը:

Չափազանց մեծ է պրոֆեսոր Կարո Լուկասի ներդրումը Իրանի եւ միջազգային գիտական ասպարեզում: Նա հեղինակել է ավելի քան 1200 գիտահետազոտական հոդվածներ, ներկայացրել է ավելի քան 200 դասախոսական ելույթներ միջազգային գիտաժողովներում, մասնակցել է 20 միջազգային գիտական պարբերականների խմբագրական կազմում, եղել է շուրջ 100 միջազգային կոնֆերանսների կազմակերպչական հանձնախմբերում, եւ հեղինակն է 8 գրքերի եւ համահեղինակն է 39 գիտական խմբագրված հավաքածուների:

Մեծ է նաեւ պրոֆեսոր Կարո Լուկասի մանկավարժական ավանդը: Նա շուրջ 30 տարի դասավանդել է Իրանի եւ միջազգային ճանաչված, այդ թվում Կալիֆորնիայի Բերքլի, Կանադայի Տորոնտոյի, եւ Կալիֆորնիայի Յու Սի Էլ Էյ (UCLA) համալսարաններում: Պրոֆեսոր Կարո Լուկասը ղեկավարել է հազարավոր մագիստրական ու դոկտորական ավարտաճառեր, եւ մեծ հարգանք է վայելում Իրանի ճարտարագիտական ուսանողների ու փորձագետների, ինչպես նաեւ պետական պատասխանատու անձանց մոտ:

2006 թվականին Կարո Լուկասը ճանաչվել է Իրանի ճարտարագիտական ասպարեզում Մնայուն Դեմքը (Eternal Figure) եւ պարգևատրվել է Իրանի նախագահի կողմից:

Պրոֆեսոր Կարո Լուկասին անվանում են Իրանի ռոբոտիկայի գիտության հայր:

Պրոֆեսոր Կարո Լուկասը անդամակցել է 2007 թվականի ամռանը Կալիֆորնիայի Սան Ֆրանսիսկո քաղաքում տեղի ունեցած Տեխնոլոգիայի համահայկական վեհաժողովի (ArmTech 07) ծրագրող հանձնախմբում:

Նայաստան

ԿՈՍԱՆՂՈՍ. «ՇԱՅԿԱԿԱՆ ՉՈՐԹԻ ԴՈՒՐՍԲԵՐՈՒՄԸ ԱԶՆՏԱԳՐՎԱԾ ՏԱՐԱԾԵՔԻՑ ՆՃԱՆԱԿՈՒՄ Է ՇԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՐԾԱՆՈՒՄ»

Հունիսի 18-ին Չայլու գյուղում կատարված ողբերգության մեջ զեներալ-մայոր Արկադի Տեր-Թադեոսյանն առաջին հերթին մեղադրում է հայկական կողմին: Սահմանում եղել են անփորձ զինվորներ, հետեւաբար սպաները պետք է ավելի աչալուրջ լինեին ու չկորցնեին զգոնությունը:



«5 հոգու կորուստը հրամանատարության մեղքն է: Կատարվածն անուշադրության հետևանք է: Սահմանին պետք է լինեին պատասխանատուներ: Այժմ դեպքի վայրում աշխատում է հատուկ խումբ, որը կբացահայտի կատարվածն, ու մեղավորները կպատժվեն: Սա պետք է դաս լինի

հայկական կողմի համար, որ այսօրինակ դեպքերը չկրկնվեն: Խորհուրդ կտայի, որ հայկական կողմը պատասխան հարված տար ադրբեջանցիներին», ասաց նա՝ հավելելով, որ Չայլու գյուղում զինվորների պահվածքը չի արտացոլում հայկական բանակի պատկերը:

Նա նշում է, որ հայկական կողմը երբեւէ սադրանքի չի դիմում, ի տարբերություն Ադրբեջանի: Կոմանդոսը համոզված է. դա հատուկ է արվում, որպեսզի իրենց համոզեն, որ ադրբեջանական բանակն ուժեղ է, եւ նրանք պատրաստ են պատերազմի՝ այդ կերպ թաքցնելով իրենց թույլ կողմերը:

Համեմատական անցկացնելով հայկական եւ ադրբեջանական բանակների միջեւ՝ Արկադի Տեր-Թադեւոսյանն առանձնացնում է, որ ադրբեջանական բանակը քանակական առումով մեծ է, քան՝ հայկականը: Սակայն քանակը դեռ չի նշանակում որակ: «Ադրբեջանական բանակում մեծամասնություն են կազմում ազգային փոքրամասնությունները՝ թալիշներ, վրացիներ, լեզգիներ, որոնք այնքան էլ չեն ցանկանում պայքարել հանուն Ադրբեջանի եւ Ալիեի կլանի: Ինչպես յուրաքանչյուր երկրում, այնպես էլ Ադրբեջանում, երկրի հարստությունը պատկանում է ոչ թե ժողովրդին, այլ՝ իշխանություններին: Յետեւաբար, երբ ասում են՝ Ադրբեջանը նավթի երկիր է, եւ Բաքվում մարդիկ երջանիկ են՝ սուտ է: Ադրբեջանում ներքին մթնոլորտը սրված է, եւ դա արտացոլվում է նաեւ բանակում»:

Կոմանդոսը չի բացառում ռազմական գործողությունների վերսկսումը, բայց եթե սկսվի, սկզբնական շրջանում հաղթանակը Ադրբեջանի կողմը կլինի: «Ադրբեջանն այդ հաղթանակը կապահովի փողի եւ տեխնիկայի օգնությամբ: Կլինեն բազմաթիվ զոհեր, սակայն որոշակի պահի հայկական կողմը մարդկային գործոնի շնորհիվ հաղթանակ կտանի: Ադրբեջանում սպաները ստիպում են զինվորներին, որ կռվեն: Դա իրենց հայրենիքը չէ եւ չեն ցանկանում օտար հողի համար մահանալ: Այս դեպքում հայկական կողմը ոչ միայն դուրս կշարտի ագրեսորին, այլ ռազմական գործողություններ կծավալի սահմանից այն կողմ»:

Հայկական կողմը գիտե Ադրբեջանի թույլ տեղը. դրանք նավթամուղներն ու գազամուղներն են, եւ հնարավոր ռազմական գործողության պարագայում առաջին հերթին հայկական կողմը դրանք կպայթեցնի: «Այդ նավթի միայն 15 տոկոսն է պատկանում Ադրբեջանին, մնացյալը՝ Անգլիային, եւ նա թույլ չի տա Ադրբեջանին վտանգել իր հարստությունը՝ պատերազմ սկսելով Հայաստանի հետ»: Կոմանդոսը հավելում է, որ եթե ռազմական ճանապարհով Ադրբեջանը չկարողանա հաղթել, գուցե հաղթի դիվանագիտական ճանապարհով: Ներկայացնելով G-8-ի հայտարարությունը՝ ասաց, որ դա հայկական դիվանագիտության պարտությունն էր:

«Երբեւէ չեն կարողացել ավելի բացասական հայտարարություն Հայաստանի մասին: Տեքստում ասվում է՝ «Հանել զորքը տարածքներից»: Դա միանշանակ օգուտ է ադրբեջանական կողմին: Հայկական զորքի դուրսբերումը ազատագրված տարածքներից ողբերգություն է եւ Հայաստանի կործանումը: Սրանով կկերտվի պարտավորական Հայաստանի ապագան: Կսկսենք մեր թշնամիների մեջ փնտրել ընկեր, հետո մեր ընկերների մեջ՝ թշնամի: Դա կկործանի մեզ», ասաց նա՝ հավելելով, որ Քլինթոնի այցը Հայաստան հետապնդում է մեկ նպատակ՝ կյանքի կոչել G-8-ի հայտարարությունը:

Արտաքին քաղաքականության ուղեգիծը գնահատելով «2», Կոմանդոսը հիշեցնում է՝ հայկական կողմը դիվանագիտական պարտություն է կրել 1994թ, երբ Բիշքեկում կնքվեց հրադադարի համաձայնագիր: «Համաձայնագրի կետերից մեկում Ադրբեջանը պահանջում է զորքերի դուրսբերում տարածքներից: Պատերազմում պարտվող կողմը նման պահանջ է դնում, եւ հաղթող կողմը դա ընդունում է: Մեր նախագահներն իրար հետեւից սխալներ են գործում: Պետք է հասկանանք, թե ինչու սխալվեցինք, որ հասանք այս արդյունքին»:

«ԱՐԻ ՏՈՒՆ» ԺՐԱԳՐԻ ԱՅՍ ՏԱՐՎԱ ԱՌԱՋԻՆ ՓՈՒՆ ԱՎԱՐՏՎԵՑ

Սփյուռքի նախարարության 2010 թվականի «Արի տուն» ծրագրի առաջին փուլն ավարտվեց տարբեր երկրներից եկած 90 հայ պարմանիների եւ պարմանուհիների՝ ավանդական դարձած այցելությամբ Գառնի, Գեղարդ եւ Սեւան: Սուրբ Կարապետ եկեղեցում նրանք մոմ են վառել, Սեւանի թերակղզում միասնության խարույկի շուրջը պար բռնել, հանդիպել Ազգային ժողովի եւ կառավարության ներկայացուցիչներին:



«Արի տուն» ծրագրի մասնակցության հավաստագրեր հանձնելով մասնակիցներին, իսկ հյուրընկալող ընտանիքներին՝ շնորհակալագրեր, Սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանը** մասնակիցներին հղել է իր սիրած խոսքը, թե նրանք պետք է լինեն Հայրենիքի փոքրիկ դեսպաններն իրենց համայնքներում: Մասնակիցներին ողջունելու էին եկել Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը, Գլենդեյլի քաղաքապետ Արա Նաջարյանը, Գեղարքունիքի մարզպետ Նվեր Պողոսյանը եւ այլ պաշտոնյաներ: Նշելով, որ Հայաստանն ուժեղ է Սփյուռքով եւ կարելի էրելով «Արի տունը», Աժ նախագահը կոչ արեց պատգամավորներին՝ իրենց հարկի տակ հյուրընկալել «Արի տուն» ծրագրի ապագա մասնակիցներին, կոչն արդեն իրականացրել է Աժ պատգամավոր **Տաճատ Վարդապետյանը**:

«Ձեր սիրտն այսուհետեւ կմնա Հայաստանում, եւ դուք միշտ ստիպված կլինեք վերադառնալ Հայրենիք», ասաց Գլենդեյլի քաղաքապետ Արա Նաջարյանը: Հրաժեշտի երեկոն նշանավորվեց «Արի տուն» ծրագրի մասնակիցների համար հատուկ գրված երգի շնորհանդեսով, որի հեղինակը երգչուհի Լեյլա Սարիբեկյանն էր, ով եղել է մասնակիցների կողքին դեռ անցած տարվանից:

ԵՐԵՎԱՆԸ ԳՐՔԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԱՅՐԱՔՍԱՂԱՔ

Երևանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հռչակվել է 2012թ-ի գրքի համաշխարհային մայրաքաղաք: Այս մասին հուլիսի 3-ին Երևանի քաղաքապետարանում հրավիրված ասուլիսի ժամանակ հայտարարեցին Երևանի քաղաքապետ Գագիկ Բեգլարյանն ու Մշակույթի

նախարար Հասմիկ Պողոսյանը: Շնորհավորելով ներկաներին Երևանի քաղաքապետը նշեց. 'Բարձր այս տիտղոսը հրաշալի առիթ է մեր սիրելի մայրաքաղաքը աշխարհին հավուր պատշաճի ներկայացնելու համար': ՅՈՒՆԵՍԿՕ-ն և Հրատարակիչների, Գրավաճառների ու Գրադանավարների միջազգային կազմակերպությունները ամեն տարի ընտրում են այն քաղաքը, որը հռչակվում է գրքի համաշխարհային մայրաքաղաք: Ընտրությունը կատարվում է քաղաքապետարանների կողմից ներկայացված հայտերի հիման վրա:

ԼՅՈՒՂՎԻԳ ԴՈՒՐՅԱՆ

Վախճանվեց գրական ավագ սերնդի երեւելի բանաստեղծ Լյուդվիգ Դուրյանը: Նրա գրչին են պատկանում շուրջ 30 ժողովածուներ, ինչպես՝ «Մաշտոց», «Ասք հողի», «Լեռները չեն խոնարհվում», «Եռագույն առագաստ», «Քարե արցունք», «Եվ մանանա, եւ նշխարք», «Կյանք իմացյալ» եւ այլ գրքեր: Վերջին ժողովածուի համար Լյուդվիգ Դուրյանին շնորհվել է Թեքեյան մշակութային միության գրական մրցանակը: Բանաստեղծն արժանացել է նաեւ բազմաթիվ այլ մրցանակների, այդ թվում՝ Հոփի. Թումանյանի անվան մրցանակի: Լյուդվիգ Դուրյանը ծնվել է 1933 թ.-ին Չալքը գյուղում (Կրասնոդար): 1935 թ.-ին ընտանիքը տեղափոխվել է Հայաստան: Երկար տարիներ պատասխանատու պաշտոններ է վարել գրահրատարակչության ոլորտում: Նրա տեքստերով գրվել են բազմաթիվ սիրված երգեր, զգալիորեն մեծացնելով նրա ժողովրդականությունը: Հոգեհանգիստը տեղի կունենա հուլիսի 10-ին, ժամը 19-ին, Թումանյան 1/1 հասցեում: Վերջին հրաժեշտը հուլիսի 11-ին, ժամը 12-14-ը՝ Կամերային երաժշտության տանը:

ՎԱՐԵ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԸ՝ ԱԳՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՈԱԶԻՆ ՌԵԿՏՈՐ

Հայաստանի ԱԳՆ դիվանագիտական դպրոցում երեկ արտոգործնախարար Էդվարդ Նալբանդյանը ներկայացրել է նորանշանակ ռեկտոր Վահե Գաբրիելյանին. «Դեսպան Գաբրելյանի կուտակած փորձն ու հմտությունները անշուշտ կնպաստեն դպրոցի առջեւ դրված խնդիրների իրականացմանը», ասել է արտոգործնախարարը՝ հավելելով, որ ԱԳՆ կադրերի դարբնոցի առաջին ղեկավարը դառնալը պատվաբեր, միաժամանակ պարտավորեցնող ու բարդ աշխատանք է:

Սփյուռք

ՎԵՐՍՎՍՎՈ՞ՒՄ ԵՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՍԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԻԱԿՈՐՄԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1980-ական թթ.-ի վերջերից ընդհատված Մ. Նահանգների Հայ եկեղեցու Արեւելյան թեմի վերամիավորման բանակցությունները կարող են վերսկսվել առաջիկա օրերին, տեղեկացնում են «Ազգի» աղբյուրները Նյու

Յորքից: Ըստ միեւնույն աղբյուրների, հունիսի 17-ին ՀՀ Դատախազության տեղի կառույցները ներկայացնող մի պատվիրակություն առաջին անգամ քաղաքավարական այց է կատարել Արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանին շնորհավորելով նրան վերջերս կայացած վերընտրության առթիվ: Հիշեցնենք, որ 1956 թ.-ից ի վեր, երբ ՀՀ Դատախազության ջանքերով երկփեղկվեց Հայ եկեղեցին, Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսության (Անթիլիաս) կարգադրությամբ եւ վերջինիս ենթակայության ներքո կազմվեց անթիլիասական թեմ նաեւ Մ. Նահանգների երկու հատվածներում, որը Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի ճանաչմանը բնականաբար չի արժանացել: Ամբողջալի այդ կացությանը վերջ տալու եւ ժողովրդի ցանկությանը ընդառաջելու նպատակով անցյալ դարի 70-ական թթ.-ին վերամիավորման կամ միության խառն հանձնաժողով կազմվեց, որի աշխատանքները բաղձալի ավարտ չունեցան: Ահա նոր փորձ է կատարվելու այդ ուղղությամբ:

Ընտրվել է Պոլսո հայոց պատրիարքի փոխանորդը



Պոլսո հայոց պատրիարքարանի հոգևոր խորհուրդը նախօրեին ընտրեց պատրիարքի փոխանորդ: Պոլսո հայոց պատրիարքի Մեսրոպ Մութաֆյանի փոխանորդն այսուհետեւ լինելու է արքեպիսկոպոս Արամ Աթեշյանը: Այս մասին տեղեկացնում է թուրքական «Հյուրրիչեթ» օրաթերթը: Հիշեցնենք, որ թուրքիաբնակ հայության 84—րդ պատրիարք Մեսրոպ Մութաֆյանը առողջական լուրջ խնդիրների պատճառով անկարող էր հովվապետություն անել հավատացյալ հոտի համար: Այդ պատճառով էլ փոխանորդ պատրիարք ընտրելու անհրաժեշտություն էր առաջացել: 03-07-2010

ԴԱՏԱԿԱՆ ՐԱՅՑ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Հայցը ներկայացրել են Լոս Անջելեսում բնակվող ամերիկահայատակ Կարպիս Դավոյանն ու Հրայր Թուրաբյանը՝ պահանջելով «միլիարդների» հասնող փոխհատուցում Թուրքիայից 1915-ին հայերից առգրավված շարժական եւ անշարժ գույքի, ինչպես նաեւ բանկային ավանդների դիմաց: Ըստ Ասոշիեթեդ պրես գործակալության, հայցը ներկայացվել է ինչպես թուրքական կառավարության, այնպես էլ Թուրքիայի կենտրոնական եւ գյուղատնտեսական բանկերի դեմ՝ պահանջելով առգրավման համար մեղավոր ճանաչել վերջիններիս: Ինչպես երեկվա համարում նշել է թուրքական «Հյուրիթեթ»

թերթը, դատարան ներկայացված հայց-դիմումով հայցվորները 1915-ին հայերից առգրավված վարելահողերի, շենքերի, գործատեղերի, բանկային ավանդների, այդ թվում նաեւ առ այսօր Թուրքիայի թանգարաններում ցուցադրվող արվեստի թանկարժեք նմուշների համար պահանջել են փոխհատուցում:

Նրանք ասել են, որ 1915-ին յուրացնելով երկրի հայ քաղաքացիների ունեցվածքը, թուրքական կառավարությունը դրանք վաճառքի է հանել կամ էլ վարձակալական հիմունքներով շահագործել է: Թեեւ կառավարության որոշումով վաճառքից եւ վարձակալությունից ստացված գումարները կուտակվել են բանկում, որպեսզի վերադարձնեն ունեցվածքի հայ սեփականատերերին, սակայն կառավարությունը հետագայում, խոստումը դրժելու գնով, խախտել է իր իսկ ընդունած որոշումը եւ հայերի ունեցվածքի հետ, յուրացրել է նաեւ ունեցվածքից ձեռք բերված գումարները:

Հայցվորների դատապաշտպաններից Մարկ Կիրակոսը Ասոշիեթեդ պրեսին հայտարարել է, որ սա թուրքական կառավարության դեմ ուղղակի բացված առաջին դատն է, ինչպես բոլոր դատապաշտպանները, այնպես էլ նրանց պաշտպանյալները 1915-ի Ցեղասպանության զոհերի ժառանգներն են: Ենթադրվում է, որ այս դատը երկարաձգվի մինչեւ 3 տարի:

Միջազգային

Թուրքիան սկսել է հայերին վերադարձնել և պատմական հողերը



News.am. 5-8-2010- Կալիֆոռնիայի հայազգի գործիչների կողմից դատարան ներկայացված հայցի նկատմամբ արձագանքները Թուրքիայում միանշանակ չեն: Այդ մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում նշել է Ստամբուլում հրատարակվող «Ակոս» թերթի խմբագիր Արիս Նալչըն: Սակայն, նրա խոսքով, գերակշռում է հանդարտ վերաբերունքը:

«Կան, իհարկե, արմատական տրամադրված անձինք, որոնք հայերին մեղադրում են բոլոր մահացու մեղքերի մեջ, որ նրանք ոտնձգություններ են անում «թուրքական հողերի» նկատմամբ, թուրքերից խլում են ունեցվածքը եւ այլն, սակայն մեծամասնությունը նորմալ է վերաբերվում: Վերջին շրջանում հաճախակիացել են դեպքերը, երբ հայազգի դեմքերը, որ համապատասխան փաստաթղթեր ունեն, սեփականության հայց են ներկայացրել եւ ստացել այն», - ասել է նա:

Հարցին, թե որքան հարթ է ընթանում այդ գործընթացը, Նալչըն նկատել է, որ բյուրոկրատական թերացումներ,

իհարկե, կան, բայց գործընթացն ընդհանուր առմամբ հարթ է ընթանում:

«Եւ դա շատ ճիշտ է», - ընդգծել է լրագրողը եւ հավելել. «Մենք պետք է մեր ունեցվածքի համար պայքարենք մտքի ուժով, ոչ այլ կերպ»: Նալչընի խոսքով, կալիֆոռնիացիները պահանջելու ոչինչ չունեն ԱՄՆ-ից: Խմբագիրը հայտարարել է, որ յուրաքանչյուր նման հարց պետք է լուծվի բուն Թուրքիայի տարածքում:

«ԱՄՆ-ը ոչինչ չի կարող որոշել: Այսօր Թուրքիայի կառավարությունը համարժեք է արձագանքում պահանջներին, եւ եթե հիմնավորված է համարում, բավարարում է դրանք», - նշել է նա:

Զրույցի վերջում Նալչըն հավելել է, որ այդուհանդերձ կարծում է, որ Կալիֆոռնիայի հայերը կարող են հաջողության հասնել: «Շատ լավ բան կլիներ», - հույս է հայտնել նա:

Շասարակական

Հարցազրույց

ԱՆՆՐԱԺԵՏ Է ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱՎԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԸ

Այնուհետեւ հստակեցնել իրավական պահանջի բնույթն ու բովանդակությունը

Վերջին

ժամանակներում շատ են խոսակցությունները

Ցեղասպանության հարցով միջազգային որեւէ դատարան դիմելու հնարավորության մասին: Հնչում են տարբեր կարծիքներ, հնչում են նաեւ միջազգային տարբեր դատարանների անուններ, այդ թվում Հասազայի



միջազգային քրեական դատարանի: Ի վերջո կարող ենք դիմել միջազգային դատարան: Եթե կարող ենք, ապա ո՞րը, ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ հայցի համար: Այս կապակցությամբ «Ազգը» զրուցեց միջազգային իրավունքի մասնագետ Վլադիմիր Վարդանյանի հետ: Մեր թերթը օրեր առաջ տեղեկացրեց, որ Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ Արա Աբրահամյանի նախաձեռնությամբ հուլիսի 2-ին Գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ միջազգային խորհրդաժողով, որտեղ հենց քննարկվեցին հարցեր միջազգային դատարան դիմելու ուղղությամբ: Մեր զրուցակիցը նույնպես ելույթ ունեցավ այդ օրը:

- Պարոն Վարդանյան, ներկայացրեք, թե կոնկրետ ո՞ր միջազգային դատարանը կարող ենք դիմել, ո՞րն է ավելի նպատակահարմար՝ քննելու Ցեղասպանության գործը:

- Այստեղ ոչ թե նպատակահարմարության, այլ դատարանի իրավագործության հարցն է, թե ո՞ր դատարանն ունի իրավագործություն եւ իրավասություն: Այս հարցում իմ մոտեցումը հետեւյալն է. եթե պահանջ ներկայացնելու իրավական հիմքը Ցեղասպանության մասին կոնվենցիան է, ապա դա բացառապես ՄԱԿ-ի միջազգային դատարանն է, եթե հիմքը այլ է, օրինակ, Հայոց ցեղասպանությանն առնչվող հարակից պահանջները՝ գույքային, կամ ֆինանսական, կամ ցեղասպանության ժխտման դեմ ուղղված պահանջներ, ապա դատական ատյանները եւս կարող են տարբեր լինել: Իհարկե, եթե մենք դիտարկենք Ցեղասպանությունը որպես Ցեղասպանության մասին կոնվենցիայի շրջանակներից դուրս գոյություն ունեցող հանցագործություն, այսինքն՝ հանցագործություն, որը պարտադիր է բոլոր պետությունների համար միջազգային իրավունքի տեսանկյունից որպես սովորութային միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերում արտացոլվող արգելք, ապա կարող ենք եւ դատական իրավագործության ավելի լայն շրջանակ դիտարկել: Բայց այստեղ կան մի շարք նրբություններ՝ իրավական, տեխնիկական եւ այլ բնույթի: Նրբություններ, որոնցից շատերն այն աստիճան յուրահատուկ են իրավաբանական տեխնիկայի տեսանկյունից, որ լայն ընթերցողին պարզապես կխճճեն: Ի տարբերություն ամերիկյան ֆիլմերի, որտեղ դատավարությունը, որպես կանոն, ներկայացվում է իբրեւ շոու, միջազգային դատարանում հայցի քննության նախապայմարանները նախ եւ առաջ հսկայածավալ քանակությամբ փաստաթղթերի պատրաստումն է եւ մեծ քանակությամբ դիրքորոշումների մշակումը՝ այդ հարցի վերաբերյալ: Այլ կերպ ասած, եթե ցեղասպանության մասին կոնվենցիան պետք է հիմք լինի իրավական պահանջին, ապա այդ հարցը միանշանակ պետք է վերաբերի ՄԱԿ-ի միջազգային դատարանի իրավագործությանը, Ցեղասպանության մասին կոնվենցիայի 9-րդ հոդվածի հիման վրա, որը նախատեսում է կոնվենցիայի հետ կապված վեճերի լուծման դատական ընթացակարգ:

- Իսկ ո՞վ է իրավասու դիմելու միջազգային դատարան, հանրապետությունը, թե՞ դա կարող է անել նաեւ անհատների որեւէ խումբ:

- Միջազգային վեճերի առկայության պարագայում ՄԱԿ-ի միջազգային դատարան կարող են դիմել բացառապես ՄԱԿ-ի միջազգային դատարանի կանոնադրությամբ մասնակից պետությունները: Պետությունը՝ դառնալով ՄԱԿ-ի անդամ, ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն դառնում է նաեւ ՄԱԿ-ի միջազգային դատարանի կանոնադրության մասնակից, բայց դատարանն ունի իրավագործութային առանձնահատկություններ: Այսպես՝ դատարանի իրավագործությունը բոլոր դեպքերում պարտադիր չէ. պետությունը պետք է հանդես գա հայտարարությամբ՝ ճանաչելով դատարանի իրավագործությունը ընդհանրապես որպես այդպիսին կամ որոշակի իրավիճակների կապակցությամբ: Ինչպիսի՞ն է մասնավոր քննարկվող դեպքը. Ցեղասպանության կոնվենցիայի պարագայում, վերջինս արդեն 9-րդ հոդվածում դրույթ է նախատեսում, ըստ որի՝ այդ կոնվենցիայի կիրառման, կատարման, մեկնաբանման

հետ կապված վեճերը կոնվենցիայի մասնակիցները կարող են ներկայացնել ՄԱԿ-ի միջազգային դատարան: Եվ եթե պետությունն այդ դրույթի վերաբերյալ վերապահում չի կատարում, ապա համարվում է, որ տվյալ հարցով այն ընդունում է դատարանի պարտադիր իրավագործությունը:

- Եվ թուրքիան որեւէ վերապահում չի՞ կատարել:

- Ոչ թուրքիան, ոչ Հայաստանը վերապահումներ չեն կատարել, ժամանակին դա կատարել էր ԽՍՀՄ-ը, որը, սակայն, 80-ականների վերջին հանվեց:

- Իսկ որքանով կարող է ՄԱԿ-ի միջազգային դատարանը իր վճռով պատասխանատվության կանչել թուրքիային:

- Գտնում են, որ դեռ վաղ է նման հարցադրում անելը՝ հետեւյալ պատճառաբանությամբ. նախ՝ դատարան դիմելու ընթացակարգը բավական մեծ ռեսուրսներ՝ ինչպես մարդկային եւ մասնագիտական, այնպես էլ ֆինանսական, պահանջող գործընթաց է: Փաստաթղթերի պատրաստման գործընթացն իր հերթին բավական բարդ է: Եվ քանի դեռ մենք չենք անցել այդ գործընթացը, ապա վաղ է խոսելը, թե ինչի կհանգեցնի այն, եթե անցնենք: Ի վերջո, ամեն ինչ կախված կլինի նրանից, թե մենք ինչպիսի՞ պահանջ կներկայացնենք դատարան:

- Պարոն Վարդանյան, իսկ կոնկրետ ՄԱԿ-ի միջազգային դատարանն ունի՞ նման գործերի քննության եւ վճռի հրապարակման նախադեպեր:

- Այո, այսօր առկա է միջազգային դատարանի միայն մեկ վերջնական վճիռ՝ դա Բոսնիա եւ Հերցեգովինան ընդդեմ Սերբիայի գործով ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումն է, որով Սերբիան պատասխանատվության է կանչվել ոչ թե բուն Ցեղասպանության կազմակերպման մեղադրանքի հիման վրա, այլ Ցեղասպանությունը չկամխարգելելու պարտավորությունը չկատարելու, հետեւաբար՝ Ցեղասպանության մասին կոնվենցիայի դրույթները խախտելու մեջ:

- Իսկ որեւէ նոր գործ քննելիս դատարանը հաշվի առնո՞ւմ է գործի նախադեպը:

- Դատարանը, որպես կանոն, առաջնորդվում է իր ձեւակերպած իրավական դիրքորոշումներով: Իհարկե, հաշվի չառնել չի կարող, որովհետեւ առկա են դիրքորոշումներ, որոնք անտեսել դատարանը պարզապես չի կարող, օրինակ՝ ո՞րն է ցեղասպանության հանցագործության տարրերի բովանդակությունը, ի՞նչ է մասնակի ցեղասպանությունը, ինչպե՞ս կարելի է վերհանել ցեղասպանությունը կատարելու հատուկ մտադրությունները: Այդ տեսանկյունից, իհարկե, դատարանը որոշակի կաշկանդվածություն ունի, քանի որ հետեւում է իր իսկ մշակած իրավական պրակտիկային, դիրքորոշումներին: Բայց ինչ վերաբերում է կոնկրետ դեպքի քննությանը եւ եզրակացությունների մշակմանը, ապա, իկարկե, դատարանն այստեղ նախաձեռնելու է նախ համապատասխան վերաբերելի փաստերի, իսկ այնուհետեւ՝ կիրառելի իրավունքի՝ այսինքն, տվյալ իրավիճակի նկատմամբ տարածվող իրավական նորմերի վերհանում:

- Վերջերս հայկական մամուլը, երբեմն շփոթմունքով, խոսում է ընդդեմ թուրքիայի հայցով միջազգային քրեական դատարան դիմելու հավանականության մասին. սա հնարավոր է:

- Չեր հարցի մեջ արդեն իսկ հայեցակարգային սխալ կա. միջազգային քրեական դատարանը կոչված է

պատասխանատվության կանչելու ֆիզիկական անձանց: Չեղարկված շայնք ցեղասպանության հարցով Չայաստանի կողմից ընդդեմ թուրքիայի չի կարող որեւէ դիմում ներկայացվել որեւէ միջազգային քրեական դատարան: Ես չգիտեմ, թե որն է պատճառը, որ Լուիս Սորենո-Օկամպոյի այցից հետո Չայաստանում շատ ակտիվորեն սկսեցին քննարկել միջազգային քրեական դատարան դիմելու հնարավորությունը: Այսօր Չայաստանում գործում են մի շարք դատական ատյաններ, եթե ասում են՝ Չայաստանի դատարան, պետք է հստակեցվի, թե կոնկրետ ո՞րը՝ Չայաստան կան միջազգային քրեական դատարանը, ՄԱԿ-ի միջազգային դատարանը, նախկին Չարավսլավիայի համար ստեղծված միջազգային քրեական տրիբունալը եւ միջնորդ արդարադատության մշտական պալատը. սրանք այն ատյաններն են, որոնք ես այս պահին մտաբերեցի: Իհարկե, եթե մենք կարողանանք հայնաբերել անձանց, որոնք անմիջական մասնակցություն են ունեցել Չայոց ցեղասպանության կազմակերպման, իրագործման մեջ, եւ եթե թուրքիան հրաժարվի դրանց պատասխանատվության կանչելուց կամ ի վիճակի չլինի դա անել, իհարկե, եթե ՀՀ-ն դառնա միջազգային քրեական դատարանի մասնակից՝ Հռոմի կանոնադրության հիման վրա, ապա կարող է այդ հարցը բարձրացվել միջազգային քրեական դատարանում: Բայց նշվածն այսօր առնվազն անիրատեսական է, քանի որ դժվար թե Չայոց ցեղասպանությունից 95 տարի անց ողջ մնացած լինեն անձինք, որոնք թեկուզեւ ոչ անմիջական մասնակցություն են ունեցել Ցեղասպանությանը, եւ հնարավոր լինի նրանց պատասխանատվության կանչել այդ դատարանի միջոցով: Բացի այդ, միջազգային քրեական դատարանը հստակ սահմանված իրավագործություն ունի քննելու բացառապես այն միջազգային հանցագործությունները, որոնք տեղի են ունեցել Հռոմի կանոնադրության ուժի մեջ մտնելուց հետո, այսինքն՝ 2002-ից հետո տեղի ունեցած հանցանքները:

- *Իստե՞նք թուրքիայի հայցի հավանականությունից, որքանո՞վ եք հիմնավորված համարում, որ թուրքիան ինքը կարող է հայց ներկայացնել միջազգային դատարան, եւ եթե այդպես լինի, չի՞ կարող շատ ավելի հարմար իրավիճակ ստեղծվել ՀՀ-ի համար:*

- Թուրքիայի հայցը իրատեսակա՞ն են համարում, թե՞ ոչ՝ մի քիչ դժվար է ասել, որովհետեւ ես այդ երկրում ծավալվող իրադարձություններին տեղեկանում եմ հիմնականում մամուլից... Ես դա համարում եմ հնարավոր: Պատճառները մի շարք են՝ իրոք, 2007-ից հետո, երբ հրապարակվեց միջազգային դատարանի առաջին «ըստ էության» վճիռը, որով պատասխանատվության կանչեցին պետությանը՝ ցեղասպանության գործով (Բոսնիայի եւ Սերբիայի գործը - Հ. Ա.), թուրքիայում որոշակի տեղաշարժ տեղի ունեցավ: Առաջացավ ալիք, որն ուղղված է նախահարձակ լինելուն, թուրքիայի համար ձեռնտու դատական որոշում ձեռքբերելուն եւ նշված հարցում իրավական վերջակետ դնելուն: Կարող եմ ենթադրել, որ նշված հիմնահարցը դեռ առկա է թուրքիայի իրավաբանական օրակարգում: Թուրքիայում պարբերաբար նման հարցեր բարձրացվում են: Միջազգային դատարան թուրքիայի դիմելու պարագայում Չայաստանի ավելի հարմարավետ դիրքում հայտնվելու կապակցությամբ ասեմ, որ կրկին շատ դժվար է պատասխանելը, քանի որ տվյալ պարագայում

եականորեն փոխվում է իրավիճակը. մի դեպքում դու ես ներկայացնում պահանջ՝ այն ձեւակերպմամբ, որն անհրաժեշտ է քեզ խնդիրներդ լուծելու համար, մյուս դեպքում՝ դու, իհարկե, կարող ես հակընդդեմ պահանջներ ներկայացնել, սակայն, ի վերջո, դու հայտնվում ես պատասխանողի կարգավիճակում: Կրկին ասեմ՝ սա իրավաբանական ռազմավարության խնդիր է եւ միանշանակ պատասխաններ, համենայն դեպս այստեղ եւ այժմ ես չեմ կարող տալ: Այն շատ ծավալուն կստացվի, օրինակ՝ Բոսնիան ընդդեմ Սերբիայի գործով դատարանի կայացրած վճիռը ավելին քան 170 էջից էր բաղկացած, եթե դրան զումարում եմք միջազգային դատարանի դատավորների հատուկ կարծիքները, ապա ծավալը գերազանցում է 1000 էջը, այսինքն սա բավական մանրազնին կատարվող աշխատանք է, եւ շատ դժվար է ընթերցողներին ներկայացնել այն ամենը, ինչը պետք է արտացոլվի իրավական փաստաթղթերում:

- *Իսկ ի՞նչ փաստաթղթեր պետք է պատրաստենք մենք՝ ի՞նչ ուղղվածության:*

- Փաստաթղթեր, որոնք կոչված են հաստատելու՝ 1. Ցեղասպանության եղելությունը, 2. Ցեղասպանության կատարված լինելը Օսմանյան կայսրության պետական մարմինների կողմից կամ դրանց թողտվությամբ, 3. փաստաթղթեր, որոնք հիմնավորում են Ցեղասպանության հանցագործության եւ Ցեղասպանության կոնվենցիայի նորմերի հետադարձ կիրառելիության հնարավորությունը, 4. Թուրքիայի Հանրապետության իրավահաջորդ լինելը Օսմանյան կայսրության, 5. այդ հանցագործության հետեւանքով՝ ՀՀ տուժող պետություն լինելու հանգամանքը եւ այլն:

- *Իսկ որքանո՞վ կարող է դատարանի վրա ազդեցություն ունենալ այն փաստը, որ արդեն շուրջ 20 երկրներ ընդունել են Ցեղասպանությունը, եւ եթե հանկարծ դատարանի վճիռը հօգուտ մեզ չլինի, ապա այդ պարագայում ի՞նչ պետք է լինի այդ երկրների որոշումների հետ:*

- Իհարկե, որ մի շարք երկրներ ճանաչել են ցեղասպանությունը, կարող է ունենալ որոշակի բարոյաբանական ազդեցություն: Իրավական տեսանկյունից դատարանի վրա այս հանգամանքը ազդեցություն ունենալ չի կարող: Դատարանը, անկախ նրանից, թե 20-30-40 պետություններ ճանաչել են Ցեղասպանությունը, ինքը պետք է իրավական որակում տա այդ արարքին:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե ի՞նչ տեղի կունենա Ցեղասպանությունը ճանաչած երկրների որոշումների հետ, ասեմ, որ դատարանը «սեւ-սպիտակ» որոշումներ չի ընդունում: Դատարանն արդեն ունի իր մշակած բավական հարուստ իրավական պրակտիկան եւ իրավաբանական պրակտիկան, որը վկայում է, որ դատարանին շատ դժվար է լինելու ասել, որ տեղի ունեցածը չի առաջացնում որեւիցե պատասխանատվություն: Դատարանը կփորձի առաջնորդվել իր իրավական դիրքորոշումներով, որոնք, իմ կարծիքով, միանշանակ «ոչ» չեն պարունակի: Իհարկե դժվար է կանխատեսել, որ այն միանշանակ «այո» է պարունակելու: Կարծում եմ, այդուհանդերձ, որ տվյալ որոշումը «բազմերանգ» է լինելու:

Վերջում ցանկանում եմ եւս մեկ անգամ կրկնել, դիմելով ինչպես ՀՀ-ի իշխանություններին, այնպես էլ սփյուռքահայությանն ու սփյուռքահայ բոլոր կազմակերպություններին. Ցեղասպանության համար

Թուրքիայի Հանրապետությանը պատասխանատվության կանչելու ուղղված հիմնական հայցի հետ մեկտեղ հնարավոր է եւ անհրաժեշտ ներկայացնել նաեւ հարակից մի շարք հայցեր այլ դատական ատյաններում: Իսկ անդրադառնալով ՄԱԿ-ի միջազգային դատարան դիմելու հիմնահարցին՝ կցանկանալի մշել հետեւյալը. ես չգիտեմ՝ պե՞տք է արդյոք ՀՀ-ն դիմի դատարան, թե՞ ոչ, բայց ինձ համար հստակ է հետեւյալը. մենք պետք է պատրաստ լինենք յուրաքանչյուր պահին որեւէ միջազգային իրավական ատյանում այս խնդիրը ներկայացնելուն, իսկ դրա համար անհրաժեշտ համապատասխան փաստաթղթերի փաթեթը մշտապես պետք է պատրաստ լինի, ու մշտապես պիտի տարվեն աշխատանքներ այդ փաթեթը հստակեցնելու եւ զարգացնելու ուղղությամբ: Սա մեկ-երկու-երեք հոգու անելիքը չէ, սա պետական լուրջ ներգրավվածություն պահանջող աշխատանք է, որը պետք է իրականացվի պետության աջակցությամբ, համապատասխան մասնագետների, այդ թվում եւ արտասահմանյան ակնառու փորձագետների ներգրավման միջոցով:

Հարցազրույցը վարեց ՅՈՒՆԿԵՎ ԱՖՅԱՆԸ -Ազգ

ԿՐՈՆԱՓՈՒՆ ՀԱՅԵՐԻ ՍԵՐՈՒՆՂՆԵՐ ԵՐՈՂԱՅՈՒՄ

Ռուբեն Մեղրոյան

Բռնի իսլամացված Հայերի ել նրանց սերունդների խնդրի ուսումնասիրությանը զուգահեռ ի հայտ են գալիս նրանց աշխարհագրական սփռվածությանը վերաբերող նոր եւ հետաքրքիր մանրամասներ: Մասնավորապես՝ Թուրքիայի կրոնափոխ Հայերի թեմայի ուշագրավ եւ, միեւնույն ժամանակ, յուրայատուկ մասն է կազմում ներկայումս Եվրոպայում բնակվող իսլամացված Հայերի սերունդների հարցը: Հայտնի է, որ ընդհանրապես կրոնափոխ հայության ներկայիս վիճակի մասին տվյալները, փաստերը շատ քիչ են, եւ եթե վերջին տարիներին Թուրքիայի իսլամացված հայերի մասին որոշ տվյալներ ի հայտ են գալիս, ապա Եվրոպայում բնակվողների վերաբերյալ նյութերն անհամեմատ ավելի քիչ են: Միայն վերջերս օտարազգի եւ հայ որոշ հեղինակներ սկսել են անդրադառնալ այս խնդրին եւ փոխանցել որոշ տեղեկություններ, որոնք, առավելապես, ունեն նկատարական բնույթ:

Նախ, անդրադառնանք կրոնափոխ հայերի Եվրոպա տեղափոխվելու խնդրին եւ փաստենք, որ 1950-ական թվա կանների վերջերին Եվրոպայում ու մասնավորապես՝ Գերմանիայում առաջանում է էժան աշխատուժի կարիք եւ այդ պատճառով մի շարք երկրների հետ կնքվում են արտագնա աշխատավորների մասին պայմանագրեր: Թուրքիայի եւ Գերմանիայի միջեւ նմանատիպ պայմանագիր է կնքվում 1961թ., որից վետո սկիզբ է առնում Թուրքիայի հազարավոր բնակիչների արտագաղթը դեպի Գերմանիա, իսկ հետագայում՝ նաեւ Եվրոպայի այլ երկրներ: Հենց այս արտագաղթի հետեւանքով է այսօր Եվրոպայում ձեւավորվել մի քանի միլիոնի հասնող թրքական համայնքը: Համաձայն որոշ տվյալների, Թուրքիայից արտագաղթողների մեջ եղել են նաեւ հայեր, ընդ որում՝ ինչպես բացահայտ քրիստոնյա, այնպես էլ կրոնափոխ կամ ծպտյալ: Կրոնափոխ հայերը եւ նրանց սերունդները մի քանի տասնամյակների ընթացքում գաղթել եւ հաստատվել են Գերմանիայի, Բելգիայի, Հոլանդիայի, Շվեդիայի, Ֆրանսիայի տարբեր բնակավայրերում, եւ այսօր նշյալ

երկրներում կան կրոնափոխ հայության սերունդներից կազմված համայնքներ կամ համայնքատիպ կառույցներ:

Տեղափոխվելով աշխարհագրական նոր միջավայր՝ կրոնափոխ հայերի եւ նրանց սերունդների շրջանում սկիզբ են առել որոշակի գործընթացներ ու երեւոյթներ, որոնք կապված են իրական ինքնությանը վերադառնալու հետ: Եվրոպաբնակ կրոնափոխ հայության շրջանում ամենատարածված եւ ուշագրավ երեւոյթը, անշուշտ, կրոնադարձությունն է՝ քրիստոնեության վերընդունումը: Եւ այսօր Եվրոպայի կրոնափոխ հայերի մեջ ակունքներին վերադարձածների թիւր բավական մեծ է: Ինչպես փոխանցում են մի շարք աղբյուրներ, կրոնադարձության, արմատների որոնման գործընթացը տարբեր զարգացումներ է ունեցել եւ այսօր էլ շարունակվում է: Մասնավորապես՝ քրիստոնեություն ավելի արագ վերընդունել են ծպտյալ հայերը, որոնք ամեն բարենպաստ առիթ օգտագործել են ակունքներին վերադառնալու Համար եւ Եվրոպա տեղափոխվելուց կարճ ժամանակ անց կամ անմիջապես հետո ընդունել են քրիստոնեություն: «Լույս» երկշաբաթաթերթի վերջին համարներից մեկում Թամար Գեւորգյանը մեջբերում է մի պատմություն, համաձայն որի՝ Թուրքիայից Գերմանիա տեղափոխված արտաքուստ մուսուլման երեւացող մի խումբ մարդիկ հենց մաքսատանն ինքնաբացահայտվում են եւ պաշտոնյային ներկայացնում ոչ թե անձնագրերում առկալ մուսուլմանական, այլ՝ հայկական անուններ: Այս ուշագրավ օրինակը ցույց է տալիս տասնամյակներ թաքցրած իրական ինքնությունը վերադառնալու ցանկությունը: Ինչպես նշում է նույն աղբյուրը, վերոհիշյալ հալերն այսօր Գերմանիայում համայնք եւ եկեղեցի ունեն:

Տարբեր աղբյուրներ փաստում են, որ այսօր Եվրոպայում բնակվող եւ քրիստոնեություն վերընդունած հալերը կրոնի հարցում շատ ավելի ջերմեռանդ են: Այստեղ կա նաեւ հոգեբանական կողմ, այն է՝ շրջապատին ապացուցել հայկականության հանդեպ իրենց հավատարմությունը: Իրական ինքնությանը վերադարձած հայերի շրջանում նկատվում են նաեւ որոշ հոգեբանական եւ հոգեկան խնդիրներ: Ոմանք անգամ բուժման կուրսեր են անցել հոգեբան-բժիշկների մոտ. վերջիններիս ախտորոշումը եղել է այն, որ կրոնադարձ հայերի հոգեվիճակի մեջ կարեւոր եւ որոշիչ դեր են ունեցել Հայոց ցեղասպանության տրավմատիկ հիշողությունները, տասնամյակներով ապրած վախի ու սպառնալիքի մթնոլորտը եւ այն, որ շարունակ թաքցրել են իրական ինքնությունը:

Այսօր Գերմանիայի տարբեր քաղաքներում կան կրոնադարձ հալերի խմբեր, որոնց մի մասը ինտեգրված է տեղի այլ հայերի հետ, իսկ մի մասը խորթության հանդիպելով հին համայնքի կողմից՝ շարունակում է վարել մեկուսի կենսակերպ եւ համայնքային կյանքից դուրս է մնում:

Գերմանաբնակ թուրք գրող Ջեմալ Յալչընը բազմաթիվ փաստեր է ներկայացնում Եվրոպայում ապրող կրոնափոխ հայերի մասին եւ մեզ ուղարկած իր նամակում նշում է. «Ես Գերմանիայում մարդկանց գիտեմ, որոնք առաջացած տարիքում անգամ վերընդունում են քրիստոնեություն եւ մկրտվում»: Հայ Առաքելական եկեղեցու Գերմանիայի թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Բեքքյանը եւս անդրադառնում է խնդրին եւ որոշ հետաքրքիր փաստեր ներկայացնում»:

«Մասիս» շաբաթաթերթ, հունիս 19, Շաբ. 1

«300 միլիոնին ղեկավարում են 3 հազար սիոնիստներ»



... Երբ վերջապես մի օր սկսե՞նք համախմբված աշխատել ու իսկապես հասկանանք, թե ինչ ասել է մեկ լեզու, մեկ հայրենիք, մեկ մշակույթ, մեկ անցյալ ու մեկ ապագա եւ գնանք Վանը տուն բերելու, հայ մասունները գալու են մեզ հետ: Թալաաթ ու Ջոհրապ: Մասուն Թալաաթը սպանեց «աղբարիկ» Ջոհրապին: Պատմությունից ոչ մի բան չենք սովորում: Մե՛ն դը: Թուրք մասունը մի բռնակալ վերադառնում է իր վայրենի ցեղին բնորոշ, հատուկ նկարագրին եւ մոռանում է հայ աղբարիկին, իսկ հայ մասունը գնում է Ստամբուլ՝ շնորհավորելու թուրք աղբարիկի քաջագործությունը: Հայի այս տեսակը հայի արյուն չունի, անուն՝ վ հայ է: Հայը թուրքին աղբարիկը չի կարող լինել: Մե՛ծ բանաստեղծն ասել է. «Այսբան չարիք թե մոռանան մեր որդիք Թող ողջ աշխարհի հայուն կարողս նախատինք»:

Կարո՞ղ մ են, սիրելի՛ Ավետիսի Սևարունյան: Օրծաղո՞ւմ են մեր դիտավորյալ անկարողության վրա: Տեսե՞ք թե ինչ է ասում Հայաստանի հուղա-մասունական Մե՛ծ օթյակի Մե՛ծ վարպետ, հուղա-մասուն Քրիստափոր Մահակյանը. ... Ամբողջ աշխարհով մեկ սփռված հայերը վերջապես հնարավորություն ունեցան Հայաստան տեղափոխելու այս ջահը, օժելով Հայաստանի մասունական Մե՛ծ օթյակը 30 հուլիս 2002-ին: ... Այսօր հուղա-մասունական «Լույսը» շողում է Հայաստանի վրա: ... Մենք, բոլորս որպես անդամներ Հայաստանի հուղա-մասունական Մե՛ծ օթյակի՝ հանձնառու ենք կառուցելու «Լույսը»՝ որպեսզի շողա Հայաստանի վերելու եւ որպեսզի կիսենք այս «Լույսը» ուրիշների հետ...»: («Արարատ» շաբաթաթերթ) Այդ ուրիշը, վստահաբար, թուրքն է: Հայի այս տեսակին պետք է վտարել Հայաստանից: Այս կերպարը մեր ազգի թշնամին է: Եվ այս բոլորը, օրը ցերեկով, պետության աչքի առաջ ու թերեւս նրա հովանավորությամբ ու աջակցությամբ: Հոյակա՞պ է..... Ասում են, թե չես կարող կաթողիկոս, պատրիարք, նախագահ, նախարար, նույնիսկ թագավոր լինել՝ եթե մասուն չես: Մի օր Անթիլիասի եպիսկոպոսներից մեկին հարցրի. - Կաթողիկոսը մասո՞ն է: - Այդ մեկուն չեմ կրնար պատասխանել,- պատասխանեց: Եթե մասունությունը մի լավ բան է, ինչո՞ւ չեն բացահայտում նրա օրենքները, ծրագիրն ու նպատակը, ու ամեն բան անում են գաղտնի, թաքուն, ծածուկ, մատիկներով:

Զարմանալին այն է, որ այլևս չեն վախենում կամ չեն ամաչում ասելու, որ իրենք մասուն են: Մասունների համար Քրիստոսը Աստված չէ, Մովհամմեդն ու Բուդդան՝ միայն մի քիչ խելք մարդիկ են: Ըստ Գերիի Կահի՛ի՝ մասունները սատանայապաշտ են, սատանային են հավատում: Ըստ մասունների՝ իրենք հավատում են Տիեզերքի Մե՛ծ ճարտարապետին:

- Իսկ է՞լ ո՞վ ա: Բնական է, չէ՞, հարցումը: Ես ձեզ մի քիչ գիտությունից խոսեմ, հետո կորոշենք՝ թե ո՞րն ի՛նչ է: Արեւը Օ՛իր Կաթին համաստեղության ծայրամասերին ղեզերող մի ռեակտոր է, ուր ատոմը կանոնավորաբար ձեռքվում է: Մեր համաստեղությունը բաղկացած է 100 միլիոն

աստղերից: Մեր տիեզերքում մեկ միլիարդ ամաստեղություններ են շրջում: Մյուս տիեզերքներն՝ չգիտեմ որքան. ոչ ոք գիտի դե՛ռ: Արեւից 1000 անգամ մե՛ծ աստղեր կան: Արեգակը 5 միլիարդ տարեկան է: 5 միլիարդ տարի էլ կարող է շրջել համաստեղության կենտրոնի շուրջը, երբ սկսելու է այնքան տաքանալ ու մե՛ծանալ, որ կլանելու է մոտիկ մոլորակներին ու փոքրանալով վերածվելու է մի աննշան կետի՝ տիեզերքի պարապության մեջ: Մարդկությունը, մինչ այդ, նոր օթեաններ պիտի որոնի: Պիտի ճամփորդենք մտքի, թե տեսողության արագությամբ: Իսկ նյո՞ւթը... Պիտի վերածվենք աստվածների՝...

Արիստոտելն ասել է. «Աստվածներն էլ սիրում են կատակել»:

Տիեզերքի մեջ կատարվում են անհավատալի, աներեւակայելի գործընթացներ:

Արեւներ պտտվում են իրար շուրջ: Հսկա աստղեր տրաքվում են եւ վերածվում սեւ խոռոչի, որոնք կլանում են աստղերին, նույնիսկ լույսին: Միլիոնավոր աստիճանների տաքություն, անհավատալի ցրտություն: Կարողացա՞մ մի բան հասկացնել: Ո՞ր ճարտարապետը կարող է ստեղծել այս բոլորը: Ամերիկացի աստղագետ Կարլ Մագանն ասում է. «Եթե ուզում ես ոչնչից կարկանդակ պատրաստել, նախ պետք է տիեզերքն ստեղծես»:

Երեւի ա՛յս են ուզում փաստել մասունները: - «Մասուններն էլ միջոց են»՝ մութ ուժերի համար,- ասում է Կահը:

Վերջապես՝ ովքե՞ր են այդ մութ ուժերը: Ամերիկացիները: Ո՛չ: Մեղք է ամերիկացի ժողովուրդը: Լավագույն պարագային՝ ոչխարի մի տեսակ է նա: Տուն-գործ, գործ-տուն, գարեջուր ու սեքս: Մա՛ է ամերիկացին: Մտահոգություն: Անշուշտ ունի: «Որքա՞ն փող ես սարքում»:

Ամերիկացիները 15 տարի պատերազմեցին Վիետնամի դեմ, բայց քարտեզի վրա չգիտեն այդ երկրի տեղը:

Շար. 1

Մշակույթ

ԸԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՃԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՋԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Պրոֆ. Ծ. Պ. Աղայան

Ելնելով ստեղծված դրությունից, հայ հասարակական-քաղաքական գործիչերից ոմանք այն կարծիքն էին հայտնում, թե հայ ժողովրդի ազատագրման համար անհրաժեշտ է դիմել եվրոպական տերությունների օգնությանն ու միջամտությանը, որովհետև սուլթանական բռնապետության և ռազմական դիկտատուրայի պայմաններում ապստամբական փորձերը վերջանում են արյունալի չարդերով: Կարծիքների բախում էր տեղի ունենում նաեւ այն կապակցությամբ, թե Հայաստանի ազատագրման հովանավորը ո՞վ պետք է լինի, Արևմտյան տերությունները, թե՞ Ռուսաստանը:

Հասկանալի էր, որ այս խնդրի արծարծման ընթացքում հաշվի էր առնվում մեծ տերություններից յուրաքանչյուրի շահագրգռվածությունը: Իսկ մեծ տերությունները, պարզ է, ելնում էին իրենց գաղութարարական ծրագրից և աշխատում օգտագործել ամեն մի առիթ, որպեսզի միջամտեն Թուրքիայի ներքին գործերին և Մերձավոր Արևելքում հարմար դիրք գրավեն:

Հայ ազատաբաղձ գործիչներին հուսադրում էին միջին դարերում ծայր առած խաչակրաց արշավանքները

և հատկապես 1645—1669 թթ. Կրետե կղում Իտալիայի (Վենետիկի հանրապետության) և Թուրքիայի միջև ավելի քան քառորդ դար շարունակվող պատերազմները: Վենետիկի հանրապետությունը, որ ժամանակի միջազգային առևտրի ասպարեզում կարևոր դեր էր խաղում, նպատակ էր դրել տիրել Միջերկրականի արևելյան ափերին: Դրանում շահագրգռվածություն էր հանդես բերում նաև Ֆրանսիան, իսկ Յոնի պապը ձգտում էր պատերազմին նոր խաչակրաց արշավանքի տեսք տալ:

Այդ հանգամանքը Թուրքիայի բռնապետության տակ հեծող քրիստոնյա ժողովուրդներին հույներին, հայերին, ասորիներին, Բալկանների սլավոնական ժողովուրդներին ազատության նոր հույսեր էր ներշնչում: Յենց այդպիսի ակնկալությամբ 1663 թ. Ասի Խաչատուր Գաղատացի կաթողիկոսը կոչ էր անում Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս XIV-ին գլխավորել Թուրքիայի լծի տակ գտնվող քրիստոնյաների ազատագրության գործը: Այդ ուղղությամբ ավելի ակտիվ գործունեություն ծավալեց Կ. Պոլսի հայոց պատրիարք Թուֆուհյան, որն այցելեց Ֆրանսիա, Լեհաստան եւ մի շարք այլ երկրներ, ստացավ պետական գործիչների երաշխավորությունները՝ օգնելու Թուրքիայի քրիստոնյաներին: Նրանք հավաստիացնում էին, թե այդ ժողովուրդների ապստամբության դեպքում իրենք պատճառ կունենան միջամտելու: Թուֆուհյան, խաբուսիկ այդ հույսերով տարված, համընդհանուր ապստամբություն հրահրելու ձգտումով, շրջեց Թուրքիայի քրիստոնյաների շրջանները, եղավ նույնիսկ եգիպտոսում և քրիստոնյա եթովպացիների շրջանում:

Հայ խոշոր առևտրականներից ոմանք, որ կապեր ունեին Լյուդովիկոս XIV-ի արքունիքի հետ, իրենց հերթին նրան հավաստիացնում էին, որ հայերը և մյուս ճնշված ժողովուրդները պատրաստ են ապստամբելու թուրքական լծի դեմ և հավակտ էին ներշնչում, թե հնարավոր կլինի վերականգնել Արևելյան կայսրությունը՝ նրա իսկ հովանավորությամբ: Նրանք նախագծում էին հայերի, հույների և մյուս քրիստոնյա ժողովուրդների համընդհանուր ապստամբություն, որի շնորհիվ հնարավոր կդառնա «շփոթություններ առաջ բերել Անատոլիայի ներսում և դիմադրել մինչև քրիստոնեական գործերի հասնելը»:

Յոնի պապ Ալեքսանդր VII-ի (1655 —1667)՝ Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսին գրած մի նամակից պարզվում է, որ պապը նրան հավաստիացրել է, թե իրեն հնազանդվելու դեպքում ամեն ինչ կանի հայ ժողովրդի ազատագրության համար:

Թուրքիայի դեմ մղված պատերազմում Վենետիկի հանրապետության կրած պարտությունից հետո, 1670-ական թվականներից, հաբսբուրգներն սկսեցին գլխավորել հակաթուրքական զինակցությունը, որի մեջ մտնում էին Ավստրիան, Լեհաստանը, Վենետիկը, հետո նաև Ռուսաստանը: Եվ ահա հայ գործիչներն էլ իրենց հույսերը կապեցին հաբսբուրգների հետ: Այդ շրջանում, երբ ակտիվացել էր ազատագրական պայքարը թե՛ Վրաստանում և թե՛ Հայաստանում, Յոնի պապը և Եվրոպական պետությունները չէին զլանում ակնկալվող օգնության մասին խոստումներ շռայլել՝ պայմանով, որ վրացիներն ու հայերը նախօրոք կաթողիկոսություն ընդունեն: Յենց նույն պայմանով Լեհաստանի Յան Սոբեսկի թագավորը, պատասխանելով Հակոբ կաթողիկոսի նամակին, խոստանում է օգնել հայերի ազատագրման գործին:

Այսպիսով, հայ ազատագրական շարժման ջատագովներն Այս Էտապում ժողովրդական ելույթները և շարժումները դիտում էին որպես առիթ արտաքին միջամտության համար և հիմնական հույսը դնում էին եվրոպական տերությունների վրա: Դրանով նրանք փաստորեն գործիք էին դառնում մեծ տերությունների դիվանագիտության ձեռքում: Պարզ էր, որ նվաճողական քաղաքականություն վարող եվրոպական տերությունների միջամտության վրա հույս դնելը դրական արդյունքի չէր կարող հասցնել: Նրանց միջամտությունն, ընդհակառակը, նորանոր չարիքներ էր բերում օսմանյան լծի տակ տառապող ժողովուրդներին: Սակայն հայ ազատագրական պայքարի գաղափարախոսությունը իրերի բերումով նորից այդ ուղիով էր ընթանում: Դա իր դրսևորումն է գտել նաև մեծ հայրենասեր Իսրայել Օրու գործունեության մեջ:

1677 թ. Հակոբ Ջուղայեցու ջանքերով էջմիածնում Ղարաբաղի մելիքների և Իսրայել Օրու մասնակցությամբ կայացած գաղտնի ժողովում որոշվեց Հայ ժողովրդին փրկելու համար դիմել եվրոպական տերություններին: Ութունամյա կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին և քսանամյա Իսրայել Օրին հանձնարարություն ստացան հայկական հարցը եվրոպական պետությունների օգնությամբ լուծելու համար արտասահման մեկնել: Հակոբ Ջուղայեցին, չդիմանալով ճանապարհի դժվարություններին, Կ. Պոլսում վախճանվեց: Իսրայել Օրին համառոտ շարունակեց իր առաքելությունը և շատ դառնություններ կրելով, Փարիզում, Վենետիկում և այլուր 20 տարի շարունակ բախեց եվրոպական տերությունների դռները: Բայց ամենուր հանդիպեց սառն անտարբերության: Ի վերջո նա եկավ այն համոզման, որ պետք է դիմել այնպիսի պետության, որի տնտեսական և քաղաքական շահերը համընկնում են հայ ժողովրդին թուրքական ու պարսկական լծից ազատելու խնդրին: XVII դ., վերջին և XVIII դ. սկզբին, ինչպես համոզվեց Օրին, այդպիսի պետություն էր Ռուսաստանը:

Իսրայել Օրու և այլ գործիչների ռուսական կողմնորոշմանը հայ-ռուսական քաղաքական կապերի զարգացման ամբողջ ընթացքի արդյունքն էր: Մոսկովյան պետությունը XVII դ. վերջերին արդեն բավականին հզորացել էր և ձգտում էր իրագործել իր քաղաքական ծրագրերը Մերձավոր Արևելքի նկատմամբ: Դա մի կողմից անհանգստություն էր առաջացնում եվրոպական տերությունների շրջանում և Թուրքիայի նկատմամբ նոր վերաբերմունք մշակելու հիմք տալիս, մյուս կողմից՝ տեղիք էր տալիս այն բանին, որ հայերն իրենց ազատագրության ակնկալությունները կապեն Ռուսաստանի հետ: Այդ կողմնորոշմանը նպաստեցին նաև հայ-ռուսական առևտրա-տնտեսական ուժեղացող կապերը, հատկապես 1667 և 1672 թթ.՝ Սպահանի հայ առևտրականների կնքած պայմանագրերը Ռուսաստանի հետ: Ալեքսեյ Մի- խայլովիչ ցարն ընդունեց հայ առևտրականների թանկարժեք նվերը՝ հայ վարպետների պատրաստած աղամանդազարդ գահը՝ ի հատուցում հայ ժողովրդին հովանավորելու նրա խոստման: Առևտրական կապերի ծավալման Համար Վոլգայի վրա հատուկ նավատորմի կառուցվեց:

Հայ-Ռուսական կապերի ամրապնդման գործում հատկապես զգալի դեր կատարեց Սպահանի հայ առևտրական ընկերության ներկայացուցիչ Գրիգոր Լուսիկենցը, որը շահի հանձնարարությամբ 1671 թ. Ռուսաստանի հետ առևտրական նոր պայմանագիր կնքեց և միաժամանակ կարևոր աշխատանք ծավալեց հայ-ռուսական հարաբերությունների ամրապնդման

ուղղությամբ: Նրա միջոցով ռուսական ցարին հանձնվեց Գանձասարի Պետրոս կաթողիկոսի դիմումը: Այդ նույն ժամանակ ցարին դիմեց նաև Էջմիածնի Հակոբ կաթողիկոսը՝ խնդրելով հայ ժողովրդին պաշտպանել կրոնական, տնտեսական և քաղաքական հալածանքներից: 1676 թ. թուրքերի դեմ տարած հաղթանակից հետո Ռուսաստանի հզորությունն առավել ակնառու դարձավ, իսկ երբ 1686 թ. Ռուսաստանը միացավ հակաթուրքական կոալիցիային, հայերի ռուսական կողմնորոշումը ավելի ուժեղացավ:

Ռուսաստանի հզորացումն անհանգստություն էր առաջացնում եվրոպական տերությունների շրջանում: Ավստրիան և ուրիշ պետություններ, ցանկանալով մեկուսացնել Ռուսաստանին, Թուրքիայի հետ 1699 թ. Կարլովիցում մասնակի հաշտություն կնքեցին և սկսեցին նրան շոյելու տևական քաղաքականություն վարել:

Ռուսաստանի միայնակ մնալը թուրքերի դեմ առավել ևս ամրապնդեց հայերի ռուսական կողմնորոշումը: Հայերն իրենց հույսերն ամբողջովին կապեց ինչ Ռուսաստանի հետ՝ նրանից ակնկալվող ազատագրական իղձերը շահկապելով նաև այն բանին, որ Պետրոս Առաջինը դեռևս XVII դ. 90-ական թվականներին իր արտաքին քաղաքականության կարևոր խնդիրներից մեկը համարում էր սուլթանի կայսրության թուլացումը:

Պետրոս Առաջինի կայսրությունը հյուսիսում ձգտում էր տիրել Բալթիկ ծովին ու պատուհան բացել դեպի Եվրոպա, հարավում՝ հասնել Միջերկրական ծով, Արևելքում ռուսական տիրապետությունն ընդարձակել մինչև Խաղաղ օվկիանոս: Դա Իսրայել Օրուն վերջնականապես հանդգեց, որ հայ ժողովրդի ազատագրման բանալին գտնվում է Ռուսաստանում: Վերադառնալով Հայաստան, նա Ղարաբաղում՝ Գյուլիստանի մեկիքի մոտ, Սյունյաց իշխանավորների մասնակցությամբ գումարեց զաղտնի ժողով, որտեղ լայնորեն քննարկվեցին Ռուսաստանի օգնությամբ հայ ժողովրդի ազատագրության քաղաքական և ռազմական հանգամանքները: Որոշվեց հայ ժողովրդին ազատագրելու և հայկական պետականությունը վերականգնելու համար դիմել ռուսական պետության օգնությանը: Ղարաբաղի մեկիքների և ավատապետերի ստորագրած դիմումը Իսրայել Օրին ներկայացրեց Պետրոս Առաջինին: Նրա առաքելությունը և առաջարկներն արժանացան ռուսական արքունիքի հավանությանը:

Շար. 2

երկար ու բարակ չարչարանքով մտածեցի “Բա տեր Աստված զինվորական հարցի պատասխանը ինչ գրեմ, բա ոնց “ԱՅՈՒ” ասեմ եթե դեռ չեմ ավարտել. իսկ եթե “ՈՉ” ասեի ,աշխատանք չէի ստանա”:

Երկար-բարակ մտաջեղուց հետո, նույնիսկ վախեցա գրել “ՈՉ”, վերջապես որոշեցի ԱՅՈՒ եւ ՈՉ-ի հարցը դատարկ թողնել, մտածելով որ եթե բախտ ունենայի եւ ինձ կանչեն, կասեի մոռացել եմ պատասխանել ուստի հույսս գցեցի Աստծուն: Երբ վերջացրի գրելը, աշխատողները արդեն ճաշի էին գնացել: միայն մնացել էր շենքի դռնապանը, որը իրավունք չուներ դուռը բանալ:

Դրսում սպասեցի մինչեւ դիմումնագրի պատասխանատուն ճաշից վերադարձավ եւ իր մեքենայից ցած գալով գլուխը գցեց քայլելով դեպի ընկերության շենք. իր հետեւից վազելով եւ ամաչելով ազգանունը կանչեցի “ջենաբե Մոեզզի” ... “ջենաբե Մոեզզի” այսպես իրեն հարգելի պարոն “Մոեզզի” ազգանունով կանչելով իմ լրացրած խնդրագիրս ձեռքս առած երեք անգամ կանչելուց վերջապես անդրադարձավ ու գլխով արեց հետնվել իրեն: Ծենքը ներս մտնելուց դռնապանը պարոն “Մոեզզի”-ին հարգանք ցույց տալով իր նստած տեղից կանգնեց եւ պարոն “Մոեզզի”-ն առանց ինձ նայելու ասաց «թամամ քարդի ռույե միզ բեզար, խաբարեթ միքոնիմ».

այսպես ասելով որ “եթե դիմումնագիրը վերջացրել ես, սեղանի վրա դիր, պետք եղած քեզ հետ կը-կապվենք”:

Ընդհակառակությամբ հայտնելով դուրս եկայ եւ նույն ճանապարհով քայլելով վերադարձա վարպետ Սաքոի խանութը, հուսալով որ կը հանդիպեմ, կանացի սափրիչ վարպետ Համոին: Արդեն մտնեմուն էի մեր ընկեր Սաքոի խանութին երբ հայերեն խոսակցության ձայն լսեցի եւ շատ հոգնած բայց ուրախ-ուրախ ներս մտա եւ բարեվեցի: Ընկեր Սաքոն առանց սպսելու վարպետ Համոին ծանօթացրեց ու ասավ «Էս էլ մեր Մամուքցի Համոն, որ աշխարհից լուր ունի»:

Խանութի անկյունի հաճախորդների տեղը գրավելով, երկար ու բարակ զրուցեցինք եւ որքան ուրախալի էր որ Չարմահալ գաւառի Մամուքա գյուղից եկած այդ հողագործ բանվոր ընտանիքի զավակը քիչ կրթությունով եւ առանց որեւէ արհեստից գաղափար ունանալու մի հայի մոտ սափրիչ էր վարձվել եւ կարճ ժամանակում, կամաց կամաց կանացի սափրիչության մասնագետ դարձել եւ իր համար անկախ խանութ բացել:

Երբ իմ ուրախությունը տեսավ, մեր համազավառացի հարգելի մասնագետ սափրիչ Համոն պատմեց մի ուրիշ հաջողակ մամուքցի համագյուղացու մասին որ նա էլ իր նման սափրիչի աշակերտությունից, իր մասնագիտությունը փոխել եւ “Մեդքո/ Sedco” անունով Ամերիկյան ընկերության մէջ գործի անցել եւ ճարպկությամբ ինքն էլ կարճ ժամանակում այնքան էր առաջադիմել որ բարձր գնահատանքի էր արժանացել եւ մեծ պաշտոնյա էր դարձել եւ ասաց, թե լավ կլիներ ինձ ծանոթացնելով նրան, ինձ էլ աշխատանքի հրավիրեն այդ ընկերությանը:

Խոհեր

Մեր անցած ձամբան

Թ. Ղարախանյան Միրակցի

Մինչեւ վարպետ Համոին հանդիպելը վարպետ Սաքոից խնդրեցի, որ նոր գործատեղերի մասին ինձ տեղեկացնի. նա էլ իսկույն ասաց “Դ-Ե-Չ” անունով մի ընկերության մասին է լսել եւ կարծում է որ “Քարուն” գետի արեվմտյան մասում է գտնվում: Անհապաղ ճամբա ընկա:

Քարուն գետի կամուրջով անցա եւ հարց ու փորց անելով վերջապես գտա այդ “Դ-Ե-Չ”-ի շենքը: Դիմեցի “Դ-Ե-Չ” ջրամբարի Պարսկա-Ամերիկյան ընկերությանը (անգլերենով “DEZ DAM PROJCT”) եւ աշխատանքի դիմումնագիր խնդրեցի: Պարսիկ կառավարիչը միայն հարցրեց իմ կրթության մասին, եւ ինձ դիմումնագիր տվեց: Մինչեւ 8 էջանոց երկու լեզվով կեսը պարսկերեն կեսը անգլերեն դիմումնագիրը լցրեցի հոգիս դուրս եկավ, ասպա *զինվորականի* հարցին հասնելով



զանկի Բաղդասարյան